

է ամեն բան ասել, բոլոր զգացածը և իմացածը միանգամից թափել, և ալըպիսով մի փոքրիկ գրածքի մէջ ինքն իրան սպառում է: Չը մոռանալով իւր համակրութիւնները և հակակրութիւնները, նա չէ կարողանում հանդարտ պատմել, այլ միջամտում է իւր վէպի մէջ: Ալըպիսով («Մանկը») գաղափար է սալիս ոչ միայն հերոսների, այլ և նոյն իսկ հեղինակի համակրութիւնների մասին:

Նկարագրութեան մէջ ևս հեղինակը իրան գործող անձն է երևակայում և, հերոսներին ներկայացնելու ժամանակ, իւր ճաշակը և կարծիքները առաջ բերելով՝ մի տեսակ միջամտում է ընթերցողի գործի մէջ:

Հեղինակը մտցնում է սրախօսութիւն, որ կազմում է գրքի լաւ

արժանաւորութիւններից մէկը. սակայն սրախօսութիւնը, իբրեւ աղ, պէտք է մի չալտնի սահմանից դուրս չը դաչ և արհեստականութեան կամ անպատճառ սրախօսելու ցանկութեան կնիք չը կրի:

Աւելորդ եւ համարում կանգ առնել նկարագրութիւնների մի քանի անկատարութիւնների և չափազանցութիւնների վերալ (գործընկալ, բժշկի անձնաւորութեան, ղղոմանման երես ունեցողի նկարագրութիւնները):

Աչքի առաջ ունենալով, որ պ. Հախումեանը թեթեւ կերպով կարողանում է նկարել կեանքի առանձին պատկերները, ցանկալի է, որ նա, զգալով իւր ալը արժանաւորութիւնը, առ ալժամ բաւականանար միայն ուրոյն պատկերներ դուրս բերելով:

Ա. Բլ.

ՅԱՐՈՒԹԻԻՆ ՄԱՐԱԴԱՆԱՆ. — «ՔԱՆԴԱՍ 02ԱՍ»». անցեալից մի յիշողութիւն. հրատարակեց Յովհաննէս Ս. Գրիգորեան. Ախալցխա. Մկրտիչ Ղալամբարեանի տպարան. 1889 թ., փոքր քառաձալ, 64 երես, տառ № 10: Արտատպած «Նոր-Պար» ամենօրեայ թերթից: Գինն է 20 կոպէկ:

Պ. Մարադեանը հարկաւոր է համարել ծանօթացնել հաշ հասարակութիւնը մի եղելութեան հետ, որ տեղի է ունեցել թիֆլիսում: Եղելութիւնը, իւր տխուր վախճանով, սարսափեցնում է մարդու և գործում է սաստիկ տպաւորութիւն: Ահա ինչպէս է պ. Մարադեանը պատմում դորա մանրամասնութիւնները:

Սօլօմօն Պետրօսովիչ վաճառականը,

մի սաստիկ հիւանդութիւնից լետով, վճռում է թողնել իւր զրկանքով լի, գծուծ կեանքը և պատկել: Նորա կին՝ բարեսիրտ և գեղեցիկ Գեթեանը ճոխացնում է և բարեկարգում նորա կեանքը և ընծայում է աշխարհին Վատարինէ անուանով մի աղջիկ, որ դառնում է ծնողների հոգսերի և խնամքի առարկան:

Սօլօմօն Պետրօսովիչը մտքում դնում

է՝ աղջկան հարսնութեան տալ իւր վաղեմի ծանօթ վաճառական Իսալի Մինէիչին։ Մինչդեռ Կատարինէն, հետեւելով իւր հակումներին, սիրահարուում է ուսուցիչ՝ Նորաւարտ համալսարանական Սարգսի վերաջ և սկըսում է հօր ցանկութեան դէմ գնալ։— Հալլը, բարկանալով աղջկայ վերան՝ «դուրս է հրում Կատարինէին տնից դուրս և դուռը փակում վերան»։

Դուրսը միջնում է. իսկ տան դուռը չի բացւում։ Յանկարծ «չորս անծանօթ ձեռքեր չափշտակում են նորան» և տանում գինեւոռն։

Կատարինէն երեք օրից չետոյ մտնում է։ Սոլումօն Պետրովիչը՝ չը կարողանալով տանել աղջկայ մահը և իւր սնանկութիւնը՝ կաթւած է ստանում։ Քեթեանը «կորչում է ամենօրեայ կեանքի անկապտութեան մէջ»։ Սարգիսը՝ մի քանիսի ասելով՝ խելագարուում է, իսկ միւսները հա-

ւատացնելով՝ թողնում է Թիֆլիսը և քաշւում է արտասահման։

Պ. Մարաղեանը պատմում է թէ ինչպէս պատրաստուեց աղ սարսափելի արկածքը։ Նա նեղութիւն է տալիս իրան նկարագրելու Սարգսի և Կատարինէի սիրահարութիւնը։ Սոլումօն Պետրովիչի և Իսալի Մինէիչի առևտրական քաղաքականութիւնը և ալլն։

Ճշմարիտ է, դրքովկում քննատակւած անցքերը նկարագրւած են շատ սովորական ձևով, բնաւորութիւնները նկարւած են թույլ կերպով, պատմութեան գլխաւոր իմաստը շատ ծամծամ է... Բայց գոնէ անհամոզւածները կարող են վերջապէս համոզւել ամենականներն կերպով, որ ծնողները չը պէտք է իրանց զաւակները ամուսնացնելու խնդրում ինքն-իրան վարւին։

Ա. ԲԼ.

Ն Ո Ր Ս Տ Ա Ց Ի Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

1) ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ ԲԺՆԿԱՊԿԱՆ (ՂԱՂԱՐԵՅԻ)՝ «ՄԱՆՈՒԿ-ՆԵՐԻ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆ-ՆԵՐԸ» Արտատպած «Մուրճ» ամսագրից, Թիֆլիս, տպարան Մ. Ռօտի-նեանցի, 1889 թ., գինն է 5 կոպ.։ (Արդիւնքը հեղինակի կողմից չառկացրած է «Մուրճ»-ի փոխատու-խնայողական Գանձարանին)։

2) ՉՄՇԿԵԱՆ ՄԱԿԱՐ՝ «ԾՈՑԻ ՕՐԱՑՈՑ» 1890 թւականին Քրիստոսի. Թիֆլիս, տպարան Մ. Ռօտինեանցի, 1889 թ.։ Գինն է 15 կոպէկ։

3) «ՍՈԿՐԱՏԷՍ», Թարգմանութիւն օր. Թեկլի ՍՏԵՓՈՅԵԱՆԻ, հրատարակութիւն Թիֆլիսի Ընկեր. Հայերէն Գրքերի հրատարակութեան. Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 1889 թ. գինն է 10 կոպ. ամեն տեղ։